ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1965—1975)

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԴԱԹՅԱՆ

Զարգացած սոցիալիզմի փուլում հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրը կուսակցության տնտեսական ստրատեգիայի հիմնական ուղղությունն է։ Ուստի հասարակական արդյունքն ավելացնելու նպատակով գործադրվող միջոցների և տնտեսական լծակների շարքում կարևոր գործոններից մեկը սոցիալիստական մրցությունն է՝ որպես նոր ռեզերվների բացահայտման համար աշխատավոր զանգվածների ստեղծագործական նախաձեռնությունները մոբիլիզացնող անսպառ հնարավորություն։

Ընդունելով հարցի հրատապությունն ու հասարակական-տնտեսական նշանակությունը, հանրապետության գյուղատնտեսական կոլեկտիվները 8-րդ և 9-րդ հնգամյակի տարիներին զգալի աշխատանք կատարեցին՝ մի շարք արժեքավոր նախաձեռնություններ դնելով իրենց շարժման հիմքում և ապահովելով գյուղատնտեսական արտադրության ընդհանուր վերելքը։ Այսպես, օրինակ, 8-րդ հնգամյակի տարիներին մեր հանրապետությունում ծնունդ առավ «հարուստ հեկտարի համար» շարժումը, որպես հանուն կոմունիստական աշխատանքի շարժման ընդհանուր ֆոնի վրա առաջացած «կոմունիստական աշխատանքի հարվածային», «կոմունիստական աշխատանքի կոլեկտիվ» և այլ շարժումների անմիջական շարունակություն և զարգացում։ «Հարուստ հեկտարի համար» շարժումը ավելի լայնորեն ծավալելու նպատակով և ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ գյուղատնտեսական մթերքներն ավելացնելու մասին ընդունած որոշումներից, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը գյուղատնտեսության աշխատողների շրջանում սոցիալիստական մրցության ծավալման վերաբերյալ 1965 թ.[1] և 1966 թ. մարտ ամիսներին[2] ընդունեցին համապատասխան որոշումներ։ Շարժման հեղինակն ու նախաձեռնողն Արտաշատի շրջանի Շահումյան գյուղի Ս. Մ. Կիրովի անվան կոլտնտեսության բրիգադավար Գ. Բարսեղյանն էր։ Փառաբանված հողագործը, մարգերով մշակվող սոխի ցանքը փոխարինելով ակոսային եղանակի, 1966 թ. հեկտարից 180-ի դիմաց ստացավ 570 ց բերք, իսկ հաջորդ տարին այն հասցրեց 700 ցենտների[3]։

Հեկտարը հարուստ դարձնելու և դրանից առավելագույնը վերցնելու նախաձեռնությունը տարածելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությամբ հանրապետության շրջանային կոմիտեները սկզբնական կուսակցական կազմակերպությունների հետ իրենց կապերն ամրապնդելու և ղեկավարման հետևողականությունն ապահովելու բազմազան ձևեր ու մեթոդներ կիրառեցին։ Այսպես, օրինակ, կուսակցության Արտաշատի շրջանային կոմիտեն սկզբնական կուսակցական կազմակերպությունների փնջային խորհրդակցություններում պարբերաբար հանդես էր գալիս հաշվետվությամբ, նրանց քննարկմանը դնում իր գործունեությունը, եղած թերությունների հիման վրա կազմում դրանք վերացնելու միջոցառումներ[4]։ Մեղրու շրջկոմը հատուկ պլանով մշակ-

---

1 «Սովետական Հայաստան», 20. VII. 1965։

2 Նույն տեղում, 19. III. 1966։

3 Ս ո ւ. Ն ղ ի ա զ ա ր յ ա ն, Նոր բնագծերի նվաճման համար, Երևան, 1976, էջ 25։

4 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1965, № 8, էջ 9։

ված միջոցառումներ էր իրականացնում ետ մնացողներին առաջավորների շարքերը հասցնելու ուղղությամբ[5], մեծ տեղ հատկացնելով սոցիալիստական մրցությանը։

Շրջանային կուսակցական կազմակերպությունների եռանդուն աշխատանքի շնորհիվ հանրապետությունում 8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին իրենց օրինակելի աշխատանքով հայտնի դարձան Շահումյանի շրջանի Լենինի անվան, Շամշադինի շրջանի Մովսես, Ապարանի շրջանի Քուչակ, Սպիտակի շրջանի Մեծ Պարնի[6], Մարտունու շրջանի Վարդենիկ, Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա, Նոյեմբերյանի շրջանի «Ջեյթուն» և «Վալվար», Մասիսի շրջանի Արբաթ[7] և այլ տնտեսություններ։ Արբաթի տնտեսությունն, օրինակ, շրջանի գրեթե ամենահետամնաց տնտեսությունն էր, և աշխօրի արժեքը հազիվ էր կազմում 1ռ. 50 կ.։ Կուսակցության Մասիսի շրջանային կոմիտեն, կիրառելով հեկտարը հարուստ դարձնելու միջոցառումների լայն ծրագիր, ընդամենը մեկ տարվա ընթացքում տնտեսության համար ապահովեց գերազանց առաջադիմություն. մեկ աշխօրի արժեքը հասցվեց 6 ռ., որի շնորհիվ դադարեց աշխատուժի հոսունությունը, այլ աշխատանքի անցած շատ կոլտնտեսականներ վերադարձան հանրային աշխատանքի[8]։

Հանրապետությունում «հարուստ հեկտարի համար» շարժմանը լայն թափ հաղորդեց հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության 50 և Վ. Ի. Լենինի ծննդյան 100-րդ տարեդարձի պատվին ծավալված սոցիալիստական մրցությունը։ Հանրապետության գրեթե բոլոր շրջաններում 8-րդ հնգամյակի տարիներին բարձր ցուցանիշների հասան կոմերիտական երիտասարդական օղակներն ու բրիգադները, որոնք ակտիվորեն մասնակցեցին սոցիալիստական մրցությանը։ Հողից առավելագույնը ստանալու և բերքն անկորուստ հավաքելու նպատակով Էջմիածնի շրջանում կոմերիտական և երիտասարդական օղակներ և բրիգադներ կազմակերպվել էին դեռևս 1966 թ., ուր այդ ժամանակ աշխատում էին 95 այդպիսի բրիգադներ[9]։ Դրանց թիվը 1968 թ. հասավ 137-ի[10]։ Այդ բրիգադները զգալի դեր խաղացին շրջանում աշխատանքային նոր ավանդույթներ ստեղծելու, տասնյակ նոր նախաձեռնություններ արմատավորելու գործում։ ՀՍՍՀ կազմավորման 50-ամյակի պատվին շրջանում կազմվեցին ևս 50 բարձր բերքի բրիգադներ[11], որոնք 1974 թ. արեցին 140 նորարարական առաջարկություններ՝ շրջանի օգուտները մեծացնելով 360 հազար ռուբլով[12]։ 2450 երիտասարդ աշխատողներ և 43 կոմերիտական-երիտասարդական բրիգադներ 9-րդ հնգամյակի առաջադրանքները կատարեցին ժամկետից շուտ, 857 կոմերիտականներ և երիտասարդներ ՀամՀԿԵՄ և ՀԼԿԵՄ կենտկոմների կողմից պարգևատրվեցին հարվածայինների կրծքանշաններով[13], իսկ ՀամՀԿԵՄ 8 անգամ իրավունք ստացան նկարվելու Մոսկվայում՝ հաղթանակի դրոշի մոտ[14]։

8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին Հոկտեմբերյանի շրջանի տընտեսություններում գործող 95 կոմերիտական-երիտասարդական բարձր բերքի բրիգադներում և օղակներում աշխատում էին 3000-ից ավելի կոմերիտականներ և երիտասարդներ[15], որոնք դարձան «հարուստ հեկտարի», «հարուստ ֆեր-

---

5 Նույն տեղում, 1966, № 7, էջ 5։

6 «Սովետական Հայաստան», 27. V. 1966։

7 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (Հայուհետ՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 95, ց. 6, գ. 21, թ. 4—5։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, ֆ. 14, ց. 19, գ. 68, թ. 63,

10 Նույն տեղում, ց. 18, գ. 82, թ. 10։

11 Նույն տեղում, գ. 105, թ. 23։

12 Նույն տեղում, գ. 68, թ. 7։

13 Նույն տեղում, ց. 19, գ. 92, թ. 19։

14 Նույն տեղում, թ. 19—20։

15 Նույն տեղում, ֆ. 90, ց. 27, գ. 6, թ. 61։

մայր», «քանակը որակով է գեղեցիկ», «տնտեսական տարին ՍՍՀՄ սահմանադրության տարեդարձի օրը» շարժումների նախաձեռնողները[16]։ ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Գ. Կարապետյանը դարձավ «հնգամյակը 3,5 տարում» շարժման նախաձեռնողը և, կատարելով իր խոստումը, արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման[17]։

Մշակվող հեկտարն ավելի հարուստ դարձնելու և նորանոր ռեզերվներ որոնելու նպատակով գյուղում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված հոբելյանական սոցիալիստական մրցությանը յուրովի արձագանքեցին հանրապետության բանջարաբուծները, պտղաբուծները ու կերամթերատու դաշտավարության աշխատողները։ Գ. Բարսեղյանի «հարուստ հեկտարի համար» նախաձեռնությանը արձագանքեցին նաև Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղի բանջարաբուծները։ Այստեղ կազմակերպվեց և անմիջապես գործի անցավ 5-րդ բրիգադի «հարուստ հեկտարի համար» կոմերիտական-երիտասարդական օղակը, Ի. Պետրոսյանի ղեկավարությամբ[18]։ Հանրապետական և շրջանային մամուլը սկսեց ավելի հաճախ անդրադառնալ «հարուստ հեկտարի համար» պայքարող օղակների գործունեությանը։ 8-րդ հնգամյակի տարիներին հաղթահարելով հեկտարից 520—650 ց բանջարեղեն ստանալու բնագիծը, օղակը 1971 և 1972 թթ. հասավ համապատասխանաբար հեկտարից 770 և 800 ց պոմիդոր աճեցնելու սահմանին և 9-րդ հնգամյակի վերջին տարում արդեն աշխատում էր 10-րդ հնգամյակի հաշվին[19]։

Էջմիածնի շրջանում 8-րդ հնգամյակի տարիներին, մասնավորապես մինչև 1969 թ., բանջարեղենի արտադրությունը չէր անցնում 35—37 հազ. տոննայից[20]։ Շրջանի էկոնոմիկայի նյութաֆինանսական հաշվեկշռում հեկտարի ցածր բերքատվությունն անհանգստացնում էր տեղի կուսակցական, սովետական և տնտեսական մարմիններին։ Շրջանի բանջարաբուծական մթերքների արտադրության ավելացման ամենաիրական ուղին մնում էր «հարուստ հեկտարի համար» պայքարը, որին արդեն ձեռնամուխ էր եղել շրջանի ամբողջ աշխատավորությունը։ Կուսակցության Էջմիածնի շրջկոմի հոնվարյան (1971) պլենումը տնտեսությունների համար սահմանեց լրացուցիչ առաջադրանքներ՝ ամրապնդելով դրանք նյութատեխնիկական մատակարարումներով և ագրոտեխնիկական ամենաանհրաժեշտ միջոցառումներով[21]։ Ամբողջ շրջանի համար իրականացնելով համալիր միջոցառումներ, Էջմիածնի շրջանի բանջարաբուծները 9-րդ հնգամյակի պլանը կատարեցին 3 տարում[22]։ Շրջանում «հարուստ հեկտարի համար» պայքարում զգալի ներդրում կատարեց Աղավնատան տնտեսության Ռ. Ավագյանի ղեկավարած բրիգադը, որը կարողացավ մեկ հեկտարի վրա 20 հազարի փոխարեն աճեցնել 35—40 հազ. բույս և, մրցության մեջ մտնելով մյուս բրիգադների հետ, հասավ ակնառու հաջողությունների[23]։

Հանրապետությունում «հարուստ հեկտարի համար» շարժումը ծավալվեց ոչ միայն բանջարաբուծության, այլև հացահատիկային, տեխնիկական, կերամթերատու կուլտուրաների, խաղողի ու պտղաբուծության գծով՝ հեկտարից առավելագույնը ստանալու նշանաբանով։

ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1967 թ. փետրվարին հաստատեցին անասնապահների, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ զբաղվող աշխատողների, խաղողագործների, պտղաբուծների, բան-

---

16 Նույն տեղում, ց. 23, գ. 31, թ. 71։

17 Նույն տեղում։

18 Տ ո ւ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 12, 17։

19 Նույն տեղում, էջ 20, 27։

20 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 14, ց. 18, գ. 105, թ. 47։

21 Նույն տեղում, գ. 19, ց. 68, թ. 65։

22 Նույն տեղում։

23 Գ. Խ. Դ ե վ ր ի կ յ ա ն, Կոչմանը հավատարիմ, Երևան, 1972, էջ 85։

ջարաբույծների և ծխախոտագործների միջև հոբելյանական տարվա և Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի պատվին ծավալված սոցիալիստական մրցության պայմանները[24]։

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ կառավարության որոշմանն անմիջապես հետևեց Ստեփանավանի շրջանի գյուղատնտեսության աշխատողների դիմումը՝ ուղղված հանրապետության կոլտնտեսականներին, սովխոզների բանվորներին, մեխանիզատորներին և գյուղատնտեսության մասնագետներին, որտեղ նրանք, հաշվի առնելով իրենց հնարավորություններն ու փորձը, գործարար մրցության կոչ էին անում, պարտավորվելով հացահատիկային կուլտուրաների հեկտարի բերքատվությունը նախատեսված 16,3-ի փոխարեն հասցնել 22 ցենտների[25]։ Ստեփանավանի շրջանի աշխատավորները հացահատիկային կուլտուրաների հեկտարի միջին բերքատվությունը 1970 թ. հասցրին 24,4 ցենտների[26], իսկ 9-րդ հնգամյակում «Ավրորա» և «Կովկասյան» նոր տեսակների շրջանացման շնորհիվ հացահատիկի հեկտարի միջին բերքատվությունը շրջանում կազմեց 26,2 ցենտնեը[27]։

Ծավալելով գործարար սոցիալիստական մրցություն, Ախուրյանի շրջանի աշխատավորները 8-րդ հնգամյակում հացահատիկի հեկտարի բերքատվությունը բարձրացրին 5—6 ցենտներով, իսկ Ազատանի, Ախուրյանի, Շիրակի, Բենիամինի և Հացիկի տնտեսությունները «հարուստ հեկտարի համար» մրցությունում հասան 18—22 ց միջին արդյունքի, գերազանցելով պլանային 13,6 ցենտների ցուցանիշը[28]։

Արարատյան դաշտավայրի և հանրապետության առավելապես հացահատիկի արտադրությամբ զբաղվող շրջանները 8-րդ հնգամյակի վերջում և հաջորդ հնգամյակում ապահովեցին հացահատիկի համախառն արտադրության զգալի աճ, առանց ցանքատարածությունների ավելացման։ Այս ամենի շնորհիվ 8-րդ հնգամյակի վերջում և 9-րդ հնգամյակի առաջին երեք տարիներին հանրապետությունում հացահատիկի համախառն արտադրանքն ավելացավ 83 հազ. ցենտներով[29], թեև ցանքատարածություններն այդ ընթացքում և հետագա տարիներին զգալիորեն կրճատվեցին[30]։ Հացահատիկային կուլտուրաների տակ դրված հողահանդակների կրճատման պայմաններում հանրապետությունում ապահովվեց հացահատիկի համախառն արտադրանքի զգալի աճ։ Այսպես, եթե 1970 թ. արտադրվել էր 251,9, իսկ 1975 թ.՝ 295,6 հազ. տոննա համախառն հացահատիկ, ապա 1977 և 1979 թթ. այդ ցուցանիշները կազմեցին համապատասխանաբար՝ 317,3 և 318,4 հազ. տոննա[31]։

Ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, Հայաստանի կուսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ և մասսաների նախաձեռնությամբ «հարուստ հեկտարի համար» շարժման հետևողական զարգացման շնորհիվ հանրապետությունում հացահատիկի արտադրության բնագավառում նվաճվեցին նոր բնագծեր, դրսևորվեց ցանքատարածությունների կրճատման պայմաններում համախառն բերքի դինամիկ աճի միտումը։

Գրեթե նույն խնդիրն էր դրված հանրապետության խաղողագործության և պտղաբուծության բնագավառների աշխատողների առջև։ 8-րդ և 9-րդ հնգամյակներում հանրապետության կոլտնտեսությունների և սովխոզների խաղողի այգիների բերքատվությունը կազմել է համապատասխանաբար՝ 50,6 և

---

24 Մի ՀՄԿԱ, ֆ. 1, դ. 92, գ. 104, թ. 128։
25 «Սովետական Հայաստան», 15. XII. 1967։
26 Մի ՀՄԿԱ, ֆ. 13, ց. 36, գ. 91, թ. 19։
27 Նույն տեղում, ց. 40, գ. 1, թ. 7—8։
28 Նույն տեղում, ֆ. 1, ց. 96, գ. 6, թ. 13։
29 «Սովետական Հայաստան», 16. IV. 1974։
30 «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», Ереван, 1980, с. 115.
31 Նույն տեղում, էջ 100։

51,8 ց[32]։ Ինչ խոսք, որ խաղողի բերքատվության աճը գրեթե աննշան էր։ Բնական է, որ ստեղծված պայմաններում խաղողագործությունը պետք է զարգանար ինտենսիվ ուղիով, հեկտարի միջին բերքատվությունը բարձրացնելու հաշվին։ Այդ խնդրի իրականացման համար Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության կառավարությունն ընդունեցին մի շարք կարևոր որոշումներ և լայն գործունեություն ծավալեցին տեղերում այն կենսագործելու համար։

«Հարուստ հեկտարի համար» շարժումը, որը համակել էր նաև հանրապետության խաղողագործներին, ծավալվում էր այգիների տարածքում վազաքանակի պահանջվող չափի ապահովման և հին թմբային այգիները շպալերային եղանակով զարգացնելու ուղղությամբ։ Դեռևս 1964 թ. կուսակցության Արտաշատի շրջանային երկրորդ կոնֆերանսի «Խաղողագործության հեռանկարային զարգացման մասին» ընդունած որոշման համաձայն շրջանում սկսվեցին հին, թմբային ցածր բերքատու այգիների վերակառուցման աշխատանքները[33]։ Կոնֆերանսի որոշման կատարման ուղղությամբ լայն աշխատանք ծավալվեց Այգեզարդի, Քաղցրաշենի, Վ. Արտաշատի և խաղողագործական մի շարք այլ խոշոր տնտեսություններում։ «Հարուստ հեկտարի համար» պայքարողների մեջ գերազանց արդյունքի հասան Քաղցրաշենի խաղողագործները, որոնք 1965 թ. հեկտարից ապահովեցին 171 ց խաղող[34], իսկ այգեզարդցիներն իրենց ունեցած 263 հա[35] բերքատու այգիների յուրաքանչյուր հեկտարից ապահովեցին 145 ց բերք։ Տնտեսության Ռ. Ստեփանյանի ղեկավարած խաղողագործական օղակը հանրապետությունում ստացավ ամենաբարձր բերքը՝ 190 ց յուրաքանչյուր հեկտարից[36], որի համար օղակավարուհին արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման[37]։

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակն արժանավայել դիմավորելու համար մրցապայքարի ելած Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների մեջ արտաշատցիները հանդես եկան որպես հոբելյանական տարին արժանավայել դիմավորելու մրցության նախաձեռնողներ՝ կոչ անելով «արտադրել ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ, ժամկետից շուտ կատարել նախահոբելյանական տարվա առաջադրանքները»[33]։ Շրջանը մինչև 10-րդ հնգամյակի կեսերը կարողացավ հիմնականում ավարտել իր ունեցած 4100 հա[39] խաղողի այգիների վերակառուցման աշխատանքները։

Այգիները լիարժեք դարձնելու և նոսրությունը վերացնելու միջոցով հեկտարը հարուստ դարձնելու լայն աշխատանք էր ծավալվում նաև Էջմիածնի շրջանում։ Շրջանի խաղողագործական գրեթե բոլոր տնտեսություններն այգիների լիարժեքությունն ապահովելու գործարար մրցություն ծավալեցին՝ դրանով ապահովելով նաև «հարուստ հեկտարի» կարևոր նախադրյալներից մեկը։ 1967—1970 թթ. ընթացքում վերակառուցվեցին և տնկվեցին 668 հա այգիներ[40], անդալիսներով և արմատակալներով լրացվեց 1 մլն 400 հազ. վազ, որով խաղողագործության մեջ տեղաշարժեր կատարվեցին[41]։ Կուսակցական և գյուղատնտեսական մարմինների ձեռնարկած միջոցառումների և այգիները վազերով լրացնելու ու վերակառուցելու շնորհիվ շրջանում խաղողի հեկտարի միջին

---

32 Նույն տեղում, էջ 104։

33 Տես. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 5։

34 «Коммунист», 23. III. 1967.

35 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 36, ց. 20, գ. 10, թ. 4—5։

36 Հ. Ս. Հովսեփյան, Հողի սերը, Երևան, 1975, էջ 4։

37 «Սովետական Հայաստան», 17. V. 1965։

38 Նույն տեղում, 19. III. 1969։

39 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 36, ց. 27, գ. 1։

40 Նույն տեղում, ֆ. 14, ց. 18, գ. 105, թ. 53։

41 Նույն տեղում, թ. 57։

բերքատվությունը 1965 թ. 52,2 ցենտներից[42] 1970 թ. հասցվեց 56 ցենտների[43]։ 9-րդ հնգամյակի տարիներին շրջանում աստիճանաբար ամրապնդվում էին 8-րդ հնգամյակում ձեռք բերված նվաճումները։ Կուսակցության Էջմիածնի շրջկոմի բյուրոն (1970), խաղողագործության բնագավառում ծավալված աշխատանքների կուսակցական ղեկավարումը ապահովելու նպատակով, որոշում ընդունեց «խաղողի այգիների հիմնման և վերակառուցման աշխատանքների մասին» և տնտեսություններին տվեց կոնկրետ հանձնարարականներ[44]։

Հանրապետությունում գործարար մրցություն ծավալվեց նաև կերամթերատու կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Հանրային անասնապահության կերի կայուն բազան ամրապնդելու և կերարտադրության աշխատանքների կուսակցական ղեկավարումը բարելավելու նպատակով ՀԿԿ Կենտկոմը և հանրապետության կառավարությունը 1965—1975 թթ. ընթացքում մի շարք կարևոր որոշումներ են ընդունել։ ՀԿԿ Կենտկոմի հաստատած միջոցառումներով նախատեսվում էր մինչև 1975 թ. հատիկաֆուրաժի արտադրությունը հասցնել 80 հազ. տոննայի[45]։ Կերարտադրությունը մեծացնելու նպատակով նախատեսվում էր նաև նոր յուրացվող ոռոգելի հողատարածությունների մի մասը, ինչպես հարթավայրային, այնպես էլ նախալեռնային և լեռնային դոտիներում վերածել կերամթերատու հանդակների[46]։ Անասնապահության կերի կայուն բազան ամրապնդելու նպատակով Ախուրյանի շրջանի աշխատավորները 8-րդ և 9-րդ հնգամյակներում լայն մրցություն ծավալեցին հատկապես տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու համար։ 8-րդ հնգամյակի տարիներին նրանք հանդես եկան «հընգամյակի ընթացքում ոչ մի ետ մնացող տնտեսություն», «հնգամյակը 4 տարում», «քիչ ծախսումներով մեծ օգուտ», «ոչ մի կաթիլ ջուր առանց նպատակի» նախաձեռնություններով, որոնք դրվեցին «հարուստ հեկտարի համար» շարժման հիմքում և հասցրին զգալի հաջողությունների[47]։ Պայքարելով բարձր բերքի համար և կենսագործելով անասնապահության կերի կայուն բազան ամրապնդելու նպատակով «Հանրապետության գյուղատնտեսության աշխատողների միջև սոցիալիստական մրցության ծավալման մասին» ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1970 թ. մարտին ընդունած որոշումը[48], Ախուրյանի շրջանի դաշտավարները դիմեցին հանրապետության բոլոր շրջաններին՝ հանրային անասնապահությունը մեկ և կես տարվա անասնակերով ապահովելու կոչով[49]։ Օրինակ ծառայելով, նրանք 21 հազ. տոննայի փոխարեն 1970 թ. կուտակեցին 25 հազ. տոննա խոտ, 19 հազ. տոննայի փոխարեն՝ 27 հազ. տոննա սիլոս[50]։

9-րդ հնգամյակի տարիներին շրջանը ստացավ ճակնդեղի բարձր և կայուն բերք՝ հեկտարից ապահովելով 340—400 ց միջին բերք՝ պլանավորված 295,5 ցենտների դիմաց[51]։ Տալով հանրապետության ճակնդեղի համախառն բերքի կեսից ավելին և հեկտարի միջին բերքատվությամբ ՍՍՀՄ-ում գրավելով առաջին տեղերից մեկը, շրջանը 1973 թ. պարգևատրվեց ՀԱՄԿԿ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի Կարմիր դրոշով և առաջին կարգի դրամական պարգևով[52]։

Կերային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու լայն շարժում

---

42 Նույն տեղում, թ. 10—11։
43 Նույն տեղում, թ. 53։
44 Նույն տեղում, թ. 4—5։
45 Նույն տեղում, ֆ. 1, ց. 96, գ. 28, թ. 16։
46 Նույն տեղում, ֆ. 89, ց. 39, գ. 7, թ. 112—113։
47 Նույն տեղում։
48 Նույն տեղում, ֆ. 1, ց. 95, գ. 54, թ. 149։
49 Նույն տեղում, ց. 29, գ. 73, թ. 16։
50 Նույն տեղում։
51 Նույն տեղում, գ. 111, թ. 15։
52 Նույն տեղում, թ. 19։

ծավալվեց նաև Վարդենիսի, Շամշադինի, Ստեփանավանի, Գորիսի, Գուգարքի, Մարտունու, Նոյեմբերյանի և այլ շրջաններում։ Վարդենիսի շրջանի գյուղատնտեսության աշխատողները, արձագանքելով ՀԼԿԵՄ Կենտկոմի և հանրապետության գյուղմինիստրության «խոտի և սիլոսի կուտակման երկամսյակ»[53] նախաձեռնությանը, ոչ միայն բարելավեցին կերի կուտակման աշխատանքները, այլև իրենք հետագայում դարձան կարևոր նախաձեռնությունների հեղինակ։ 8-րդ հնգամյակում շրջանում կյանքի կոչվեց «պայքար յուրաքանչյուր կիլոգրամ խոտի համար»[54] և «հնգամյակը 4 տարում»[55] նախաձեռնությունները։ Խոտհնձի ժամանակ բոլոր հնարավորությունների ու ռեզերվների օգտագործման շնորհիվ շրջանում խոտի կուտակման ցուցանիշը 27 հազ. տոննայից[56] 8-րդ հնգամյակի վերջում հասցվեց 36 հազ. տոննայի[57]։ Եթե կերային կուլտուրաների ցանքատարածությունները 1965 թ. կազմում էին 128,4 հազ. հա, ապա 1970 և 1975 թթ.՝ համապատասխանաբար՝ 173,7 և 193,6 հազ. հա։

Կերամթերատու հանդակները բարձր արդյունավետությամբ օգտագործելու ուղղությամբ գործարար սոցիալիստական մրցություն ծավալվեց նաև Նոյեմբերյանի շրջանում։ 8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին այստեղ նույնպես լայն թափով ծավալվեց «հարուստ հեկտարի համար» շարժումը։ Կյանքի կոչվեց «յուրաքանչյուր օրը բերքին», «բերրի դարձնենք յուրաքանչյուր հեկտարը», «ոչ մի ծիլ չթողնենք դաշտում» նախաձեռնությունները[58]։ Առանձնապես օրինակելի էր 9-րդ հնգամյակի գրեթե բոլոր տարիներին կրկնվող տոհմային-ընտանեկան շաբաթօրյակները։ Այս հիանալի նախաձեռնությունը տվեց իր ցանկալի արդյունքը, մեծ լումա ներդրեց հանրային հոտի կերի կայուն բազայի ամրապնդման գործում[59]։

8-րդ և 9-րդ հնգամյակի տարիներին հանրապետության գյուղի աշխատավորները գործարար մրցություն ծավալեցին կերային կուլտուրաների ցանքատարածություններն ընդլայնելու ուղղությամբ։ 1971—1973 թթ. ընթացքում Մարտունու շրջանի աշխատավորները, կատարելով սոցմրցությամբ ստանձնած պարտավորությունները, միայն կորնգանի ցանքատարածություններն ավելացրին 4200 հա-ով, Շամշադինի շրջանում կորնգանի ցանքատարածությունները 8-րդ հնգամյակի վերջում 1422 հեկտարից[60] 1972 թ. հասցվեցին 1957 հա-ի[61]։ 9-րդ հնգամյակի վերջում Ստեփանավանի շրջանի գյուղատնտեսական հանդակների մեծ մասն օգտագործվում էր հանրային անասնապահության կերի կայուն բազան ամրապնդելու նպատակով[62]։ Կամոյի շրջանի Սարուխանի տնտեսության կոմունիստները 1972 թ. հարց բարձրացրին ջրովի հողատարածությունների հաշվին ընդարձակել կորնգանի ցանքատարածությունները և հասան որոշակի հաջողությունների[63]։

Այսպիսով, մրցության կազմակերպման շնորհիվ 8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին կերային կուլտուրաների ցանքատարածությունները զգալիորեն ընդարձակվեցին։ Եթե դրանք 1965 թ. կազմում էին 128,4 հազ. հա, ապա 1970 և 1975 թթ.՝ համապատասխանաբար 173,7 և 193,8 հազ. հա[64]։

---

53 Նույն տեղում, ֆ. 21, ց. 21, գ. 27, թ. 5։
54 Նույն տեղում, գ. 10, թ. 11։
55 Նույն տեղում, գ. 32, թ. 11։
56 Նույն տեղում, գ. 4, թ. 40։
57 Նույն տեղում, գ. 12, թ. 43։
58 Նույն տեղում, ֆ. 99, ց. 21, գ. 6, թ. 12։
59 «Սովետական Հայաստան», 2. VII. 1973։
60 Մի ՀՄԿԱ, ֆ. 29, ց. 23, գ. 1, թ. 55։
61 Նույն տեղում, ֆ. 12, ց. 24, գ. 42, թ. 51։
62 Նույն տեղում, ց. 26, գ. 18, թ. 59։
63 Նույն տեղում, ֆ. 13, ց. 36, գ. 75, թ. 18։
64 «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», с. 116.

Սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման հարցերի լուծումը մեծ չափով կախված է նաև անասնապահության հաշող զարգացումից։ Դրան հասնելու նպատակով 8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին հանրապետության աշխատավորները լայնորեն սոցիալիստական մրցություն ծավալեցին։ 8-րդ հնգամյակի տարիներին այդ ուղղությամբ զգալի աշխատանք կատարեցին Շահումյանի շրջանի անասնապահները։ Շահումյանի անվան կոլտնտեսությունում արմատավորվեց «5000-ականների» շարժումը[65]։ Կթվորուհիներ Ն. Թումանյանը և Լ. Խոսրովյանը, Ա. Լսկալյանը և Հ. Հարությունյանը, մեկ կովի հաշվով նվաճելով 5000—5153 կգ կաթի բնագիծը, կոչ արեցին այն վերածել մասսայական շարժման[66]։ Շրջանի անասնապահական բոլոր տնտեսություններն, արձագանքելով «5000-ականների» շարժմանը, 8-րդ հնգամյակի վերջին երկու տարում նկատելիորեն բարձրացրին մեկ կովի միջին կաթնատվությունը։ Պլանավորված 2739 կգ-ի դիմաց յուրաքանչյուր կովից ստացվեց 3025 կգ կաթ, իսկ Շահումյանի, 22-րդ և 18-րդ կուսհամագումարի անվան տնտեսություններում այդ ցուցանիշները կազմեցին համապատասխանաբար 4755, 3997, 3475 կգ[67]։

Մասիսի շրջանի տնտեսությունների կուսակցական կազմակերպությունները կաթնատվության բարձրացման նպատակով նախաձեռնեցին միջշրջանային և առանձին տնտեսությունների միջև մրցության կազմակերպումը։ Դրա շնորհիվ հիմք դրվեց Մասիսի և Էջմիածնի շրջանների գյուղատնտեսության աշխատողների մրցությանը[68]։

«ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների լույսի ներքո անասնապահության հետագա զարգացման վերաբերյալ հանրապետության կուսակցական կազմակերպությունների խնդիրների վերաբերյալ» ՀԿԿ Կենտկոմի 1971 թ. հունիսի 29-ի որոշման կատարման ուղղությամբ նկատելի աշխատանք ծավալվեց հանրապետության նախալեռնային և լեռնային շրջաններում[69]։ Արժեքավոր նախաձեռնություն էր նաև «3000-ական կթվորուհիների» շարժումը, որը ծնվեց 1967 թ. Կալինինոյի շրջանում[70]։ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված հոբելյանական այս նախաձեռնությունը տարածվեց շրջանի բոլոր տնտեսություններում։ 3000-ական կթվորուհիներից շատերը մոտեցան մեկ կովից 4000 կգ կաթ ստանալու բնագծին, իսկ Լոռվա տոհմաբուծական կայանի կթվոր Ա. Մուրադյանը 9 ամսում մեկ կովից ստացավ 3384 կգ կաթ[71], զգալիորեն գերազանցելով պլանային առաջադրանքները։ 9-րդ հնգամյակի տարիներին ևս սոցմրցության շնորհիվ Կալինինոյի շրջանի անասնապահությունը զգալի վերելք ապրեց։ Անասնապահության զարգացման բնագավառում որոշ տեղաշարժեր նկատվեցին նաև Ստեփանավանի շրջանում։ 8-րդ հնգամյակի վերջերին Ստեփանավանի անասնաբուծական-անասնապահական սովխոզ-տեխնիկումում ևս սկիզբ առավ «3000-ական կթվորուհիների» շարժումը[72], որի մասնակիցների թիվը 9-րդ հնգամյակի տարիներին անհամեմատ մեծացավ։ 1972 թ. Ուռուտի կոլտնտեսության կթվորուհի Լ. Ասատրյանը շրջանում առաջինն արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Նա չորս տարի շարունակ կաթի ստացման բնագավառում շրջանում հասնում էր ամենաբարձր ցուցանիշների[73]։

Անասնապահության զարգացման բնագավառում որոշ տեղաշարժեր նը-

65 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1969, № 4, էջ 13—14։
66 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 96, գ. 6, թ. 35։
67 Նույն տեղում։
68 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1973, № 7, էջ 11։
69 «Սովետական Հայաստան», 30. VI. 1971։
70 «Коммунист», 9. VII. 1967.
71 Նույն տեղում։
72 «Սովետական Հայաստան», 16. X. 1971։
73 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 13, ց. 38, գ. 2, թ. 38։

կտտվեցին նաև Դորիսի շրջանում։ Հանրապետության անասնապահական մի շարք ֆերմաների աշխատանքի փորձն ու երկրի գյուղատնտեսական կոլեկտիվների առաջ քաշած նախաձեռնությունները լայն արձագանք գտան շրջանի անասնապահների շրջանում։ Այստեղ առանձնապես հայտնի դարձավ Վերիշենի սովխոզը։ Տնտեսության կուսակցական կազմակերպությունը, դիրեկցիան և բանվորական կոմիտեն առանձնակի նշանակություն էին տալիս արտադրության հարվածայինների ու նորարարների փորձի ուսումնասիրությանն ու տարածմանը։ 9-րդ հնգամյակի երկրորդ տարվա խնդիրները կատարելու համար տնտեսության ողջ աշխատավորությունն ընդգրկվել էր սոցիալիստական մրցության մեջ։ Բոլոր օղակները, բրիգադները, անհատները ունեին մրցության իրենց պարտավորությունները[74]։ Անասնապահական մթերքների արտադրության պարտավորությունների կատարման գործում մեծ նշանակություն ունեցավ շրջանում ծավալված «սոցիալիստական պարտավորությունը դարձնենք մինիմումի առաջադրանք» կոլեկտիվ շարժումը[75]։ Այն ծնունդ առավ Խնձորեսկ գյուղի երիտասարդ անասնապահների խմբում և, հավանության արժանանալով կոմերիտմիության շրջանային կազմակերպության կոնֆերանսում, որպես կոչ տարածվեց նախ շրջանում, ապա՝ հանրապետությունում[76]։ Շարժման նախաձեռնողները 9-րդ հնգամյակի վճռական տարում հասան իրենց ստանձնած սոցիալիստական պարտավորություններից ավելի բարձր ցուցանիշների, իսկ մի քանիսը գրանցվեցին 2000-ական կթվորների պատվավոր ցուցակում։ Արձագանքելով այդ կոչին, «Զանգեզուր» սովխոզի կթվորուհի Ա. Վանեսյանը, որը 8-րդ հնգամյակում մեկ ֆուրաժային կովից հազիվ ապահովում էր 1000—1200 կգ կաթ, 9-րդ հնգամյակի վճռական տարում մեկ կովի կաթի ցուցանիշը հասցրեց 2900 կգ-ի, 16 կովից ապահովեց 17 հորթ և շրջանում առաջիններից էր, որ պայքարում էր նվաճելու մեկ կովից 3000 կգ կաթի բնագիծը[77]։ Ընդհանուր առմամբ 9-րդ հնգամյակում հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում կովերի կաթնատվության միջին ցուցանիշը բարձրացավ 205 կգ-ով՝ հասնելով 1679,5 կգ-ի[78], զգալիորեն գերազանցելով նախորդ հնգամյակի ցուցանիշը։

Հանրապետությունում անասնապահական մթերքների արտադրության մեջ կարևոր տեղ էր տրվում նաև մսի արտադրության ավելացմանը։ Մի շարք շրջաններում, հատկապես Շամշադինում, Նոյեմբերյանում, Շահումյանում և Արտաշատում, այդ ճյուղը նկատելի զարգացում ապրեց։ Սոցմրցության արդյունավետ կազմակերպման և առաջավոր փորձի յուրացման շնորհիվ հանրապետության գյուղի աշխատավորները 8-րդ հնգամյակում մսի արտադրության բնագավառում հասան նշանակալի հաջողություններ։ Հնգամյակի տարիներին խոշոր եղջերավոր անասունների տարեկան միջին գլխաքանակի աճը կազմեց 7%, այդ թվում կովերինը՝ 11։ Այդ ընթացքում թռչունների տարեկան միջին գլխաքանակը աճեց 37,6%-ով[79]։ Նույն ժամանակաշրջանում մսի արտադրությունը հանրապետությունում ավելացավ 16,3, կաթինը՝ 12, ձվինը՝ 61,8%-ով, որը հնարավորություն տվեց դրանց վաճառքի հնգամյա պլանները կատարել համապատասխանաբար 107,8, 105,2, 102,8%-ով։

9-րդ հնգամյակի առաջին տարիներին հանրապետության անասնապահության բնագավառի աշխատողները սոցմրցության շնորհիվ նվաճեցին նոր բարձրություններ։ Այսպես, 1973 թ. տվյալները ցույց տվեցին, որ մեզանում անասնագլխաքանակի աճի ցուցանիշներն անհամեմատ բարձր են, քան միջին միութենականը։ Գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի մեջ անասնաբուծության ապրանքային արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 40—

74 Նույն տեղում, ֆ. 15, ց. 26, գ. 5, թ. 22—23։

75 Նույն տեղում, թ. 24։

76 Նույն տեղում։

77 Նույն տեղում, թ. 98։

78 «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», с. 130.

79 ՄԼԻ ՀՄԿԱ, Ֆ. 1, ց. 96, գ. 28, թ. 5։

43%[80]։ Անասնագլխաքանակի նման ինտենսիվ աճը հնարավորություն տվեց ժամկետից շուտ կատարել մսի, ձվի, բրդի մթերման 9-րդ հնգամյակի առաջադրանքները։

Այսպիսով, 1965—1975 թթ. ընթացքում բուսաբուծության և անասնապահական մթերքների արտադրությունն ավելացնելու համար ծավալված սոցիալիստական մրցության, Միության և ՀՍՍՀ գյուղատնտեսության առաջավոր տնտեսությունների փորձի յուրացման հիման վրա զգալի քայլ կատարվեց հանրապետության գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ամրապնդելու և բուսաբուծական ու անասնապահական մթերքների արտադրության կայուն մեծացումն ապահովելու ուղղությամբ։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ ТРУЖЕНИКОВ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ (1965—1975)

МИКЛЕЛ МАДАТЯН

Резюме

В период развитого социализма повышение эффективности общественного производства—главное направление экономической стратегии партии. В числе проводимых с этой целью мероприятий одним из решающих является социалистическое соревнование. Велика роль социалистического соревнования в аграрном секторе социалистического народного хозяйства. В годы 8-ой и 9-ой пятилеток в нашей республике получили распространение движения «за богатый гектар» и «за богатую ферму». Эти движения способствовали заметному повышению эффективности сельскохозяйственного производства.

---

80 Ա. Կ. Այրումյան, Հայաստանի գյուղատնտեսության տեղաբաշխումն ու մասնագիտացումը, Երևան, 1974, էջ 125։